



Հայաստանի

Հանրապետության

Անշարժ գույքի շուկան

**2018 թվականի առաջին կիսամյակում
(վերլուծություն)**

REAL PROPERTY CADASTRE

ԱՆՇԱՐՋ ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՆ

Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2018 թվականի առաջին կիսամյակում (վերլուծություն)


Անշարժ գույքի շուկայի վերլուծությունը կատարվել է 2018 թվականի առաջին կիսամյակի ընթացքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների վերաբերյալ տվյալների, անշարժ գույքի առաջարկի շուկայից հավաքագրված տեղեկությունների և մասնագիտացված կազմակերպության կողմից անշարժ գույքի գների վերաբերյալ տրամադրված վերլուծական տվյալների հիման վրա:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

1.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.1.1 2018 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 76010 իրավունքների պետական գրանցման գործարքներ: 2009-2018 թվականների առաջին կիսամյակի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները ներկայացված են Գծապատկեր 1.1-1-ում:


Գծապատկեր 1.1-1




1.1.2 Հանրապետությունում 2018 թվականի առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների առավել բարձր տոկոսաչափը գրանցվել է Երևան քաղաքում՝ 35.4%, իսկ առավել ցածրը՝ Վայոց Ձորի մարզում 2.0%:

Գծապատկեր 1.1-2-ում և Գծապատկեր 1.1-3-ում ներկայացված են 2018 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները՝ ըստ Երևան քաղաքի և մարզերի:

Գծապատկեր 1.1-2



Գծապատկեր 1.1-3



Աղյուսակ 1.1-1-ում ներկայացված է 2018 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի առաջին և երկրորդ կիսամյակների նկատմամբ:

Աղյուսակ 1.1-1


	2017 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2017 թվականի երկրորդ կիսամյակ
Երևան	23985	12.3%	26938	-12.6%	30830
Արագածոտն	3077	37.4%	4229	-12.8%	4851
Արարատ	4260	52.7%	6507	3.2%	6303
Արմավիր	4234	34.2%	5684	-5.3%	6005
Գեղարքունիք	4190	31.8%	5524	-8.1%	6008
Լոռի	3665	72.0%	6305	16.7%	5404
Կոտայք	6792	38.0%	9373	-9.3%	10337
Շիրակ	3363	5.0%	3530	-22.1%	4532
Սյունիք	2495	34.1%	3346	-7.6%	3621
Վայոց Ձոր	1486	1.1%	1502	-30.4%	2159
Տավուշ	2609	17.7%	3072	-2.3%	3145
Հանրապետություն	60156	26.4%	76010	-8.6%	83195

2018 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում գրանցված գործարքների քանակը 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 8.6 %-ով, իսկ 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ աճել 26.4 %-ով: Երևան քաղաքում 2018 թվականի առաջին կիսամյակում գրանցված գործարքների քանակը 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 12.6 %-ով, իսկ 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ աճել 12.3 %-ով: Մարզերի քաղաքային բնակավայրերում 2018 թվականի առաջին կիսամյակում գրանցված գործարքների քանակը 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 4.0%-ով, 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ աճել 21.1%-ով, իսկ գյուղական բնակավայրերում 2018 թվականի առաջին կիսամյակում գրանցված գործարքների քանակը 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 7.7 %-ով, 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ աճել 46.6 %-ով:


1.1.3 Հանրապետությունում 2018 թվականի առաջին կիսամյակում ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 38.2 % գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 0.9 % օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.1-4-ում և Գծապատկեր 1.1-5-ում ներկայացված են 2018 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ տեսակների:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԲԱԾԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՏԵՍԱԿՆԵՐԻ



Հանրապետությունում ընդհանուր գործարքների քանակական բաշխվածությունը ըստ տեսակների



Աղյուսակ 1.1-2-ում ներկայացված է 2018 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի առաջին և երկրորդ կիսամյակների նկատմամբ:

Հ/Հ	Գործարքի տեսակ	2017 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2017 թվականի երկրորդ կիսամյակ
1	Օտարում	21706	33.9%	29062	-4.9%	30569
1ա	Առուվաճառք	15513	34.7%	20893	-10.4%	23311
1բ	Նվիրատվություն	6111	10.8%	6771	-5.4%	7157
1գ	Փոխանակում	82	-20.7%	65	-35.6%	101
1դ	Օտարման այլ տեսակ	-	-	1333	-	-
2	Վարձակալություն	4006	15.3%	4620	-16.1%	5507
3	Գրավադրում	10747	15.0%	12355	-9.0%	13578
4	Ժառանգություն	8706	39.3%	12129	-2.0%	12376
5	Օրինականացում	476	47.9%	704	-8.0%	765
6	Առաջնային գրանցում	10440	10.3%	11518	-25.0%	15361
7	Պետգր. /վերագրանցում/	4075	38.0%	5622	11.6%	5039
Ընդամենը գործարք		60156	26.4%	76010	-8.6%	83195


Աղյուսակ 1.1-3-ում ներկայացված է հանրապետությունում 2018 թվականի առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գործարքի տեսակների.

Գործարքի տեսակ		Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանատիպ գործարքներում
1	Օտարում	29062	38.2%	10879	40.4%	37.4%	7003	37.1%	24.1%	11180	37.0%	38.5%
1ա	Առուվաճառք	20893	27.5%	8174	30.3%	39.1%	5012	26.6%	24.0%	7707	25.5%	36.9%
1բ	Նվիրատվություն	6771	8.9%	2375	8.8%	35.1%	1612	8.5%	23.8%	2784	9.2%	41.1%
1գ	Փոխանակում	65	0.1%	23	0.1%	35.4%	19	0.1%	29.2%	23	0.1%	35.4%
1դ	Օտարման այլ տեսակ	1333	1.8%	307	1.1%	23.0%	360	1.9%	27.0%	666	2.2%	50.0%
2	Վարձակալություն	4620	6.1%	2285	8.5%	49.5%	1071	5.7%	23.2%	1264	4.2%	27.4%
3	Գրավադրում	12355	16.3%	6666	24.7%	54.0%	3243	17.2%	26.2%	2446	8.1%	19.8%
4	Ժառանգություն	12129	16.0%	2756	10.2%	22.7%	2647	14.0%	21.8%	6726	22.3%	55.5%
5	Օրինականացում	704	0.9%	233	0.9%	33.1%	213	1.1%	30.3%	258	0.9%	36.6%
6	Առաջնային գրանցում	11518	15.2%	2375	8.8%	20.6%	3410	18.1%	29.6%	5733	19.0%	49.8%
7	Պետգր. /վերագրանցում/	5622	7.4%	1744	6.5%	31.0%	1269	6.7%	22.6%	2609	8.6%	46.4%
Ընդամենը գործարք		76010	100.0%	26938	100.0%	35.4%	18856	100.0%	24.8%	30216	100.0%	39.8%

1.1.4 Հանրապետությունում 2018 թվականի առաջին կիսամյակում ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 34.6 % գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 2.7 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:


Գծապատկեր 1.1-6-ում և Գծապատկեր 1.1-7-ում ներկայացված են 2018 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ գույքի տեսակների.

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ



Գծապատկեր 1.1-7

Հանրապետությունում ընդհանուր գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակի



Աղյուսակ 1.1-4-ում ներկայացված է 2018 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի առաջին և երկրորդ կիսամյակների նկատմամբ:

Աղյուսակ 1.1-4

Հ/Հ	Գույքի տեսակ	Հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները
-----	--------------	---

		2017 թվականի առաջին կիսամյակ	փոփոխում ը	2018 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2017 թվականի երկրորդ կիսամյակ
1	բնակարան	18870	19.2%	22487	-13.9%	26111
2	անհատական բնակելի տուն	12497	26.2%	15773	-5.4%	16673
3	արտադրական նշ. շին	3122	-34.5%	2046	-9.3%	2257
4	հասարակական նշ. շին.	6006	16.6%	7004	2.3%	6847
5	ավտոտնակ	2149	12.2%	2412	-20.7%	3041
6	հող	17512	50.1%	26288	-7.0%	28266
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	10251	61.0%	16499	-4.9%	17358
	Ընդամենը	60156	26.4%	76010	-8.6%	83195

Աղյուսակ 1.1-5-ում ներկայացված է հանրապետությունում 2018 թվականի առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ գրանցված գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակների:

Աղյուսակ 1.1-5


Գույքի տեսակ		Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանա տիպ գործարքներում	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանա տիպ գործարքներում	քանակ	%	Տեսակ արար կշիռը նմանա տիպ գործարքներում
1	բնակարան	22487	29.6%	15463	57.4%	68.8%	6526	34.6%	29.0%	498	1.6%	2.2%
2	անհատական բնակելի տուն	15773	20.8%	3728	13.8%	23.6%	4045	21.5%	25.6%	8000	26.5%	50.7%
3	արտադրական նշ. շին	2046	2.7%	685	2.5%	33.5%	520	2.8%	25.4%	841	2.8%	41.1%
4	հասարակական նշ. շին.	7004	9.2%	4022	14.9%	57.4%	2058	10.9%	29.4%	924	3.1%	13.2%
5	ավտոտնակ	2412	3.2%	1788	6.6%	74.1%	535	2.8%	22.2%	89	0.3%	3.7%
6	հող	26288	34.6%	1252	4.6%	4.8%	5172	27.4%	19.7%	19864	65.7%	75.6%
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	16499	21.7%	161	0.6%	1.0%	1969	10.4%	11.9%	14369	47.6%	87.1%
	Ընդամենը գործարք	76010	100.0%	26938	100.0%	35.4%	18856	100.0%	24.8%	30216	100.0%	39.8%

1.2 Երևան քաղաքի անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.2.1 Երևան քաղաքում 2018 թվականի առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի առավել բարձր տոկոսաչափն արձանագրվել է Կենտրոն՝ 20.4 %, իսկ ցածրը 0.5 % Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 1.2-1-ում ներկայացված է 2018 թվականի առաջին կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների:

Երևան քաղաքում ընդհանուր գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների



Աղյուսակ 1.2-1-ում ներկայացված է 2018 թվականի առաջին կիսամյակում Երևան քաղաքում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի առաջին և երկրորդ կիսամյակների նկատմամբ:


Աղյուսակ 1.2-1

Վարչական շրջան	2017 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2017 թվականի երկրորդ կիսամյակ
Դավթաշեն	877	55.1%	1360	-38.2%	2199
Էրեբունի	1781	3.5%	1843	-5.6%	1952
Աջափնյակ	2001	32.9%	2659	1.8%	2612
Ավան	1281	-3.8%	1232	-5.3%	1301
Արաբկիր	4091	-6.5%	3825	-20.3%	4799
Կենտրոն	4851	13.5%	5505	-13.0%	6330
Մալաթիա-Սեբաստիա	2429	12.1%	2723	-7.0%	2927
Քանաքեռ-Զեյթուն	1312	52.0%	1994	-3.5%	2066
Շենգավիթ	2646	5.1%	2782	-11.5%	3145
Նոր-Նորք	2367	10.8%	2623	-12.7%	3005
Նորք-Մարաշ	197	25.9%	248	-20.3%	311
Նուբարաշեն	152	-5.3%	144	-21.3%	183
Երևան	23985	12.3%	26938	-12.6%	30830

1.2.2 Երևան քաղաքում 2018 թվականի առաջին կիսամյակում ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 40.4 % գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 0.9 % օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.2-2-ում ներկայացված է 2018 թվականի առաջին կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ տեսակների:

Գծապատկեր 1.2-2



Աղյուսակ 1.2-2-ում ներկայացված է 2018 թվականի առաջին կիսամյակում Երևան քաղաքում իրականացված գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի առաջին և երկրորդ կիսամյակների նկատմամբ:

Աղյուսակ 1.2-2


Հ/Հ	Գործարքի տեսակը	2017 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2017 թվականի երկրորդ կիսամյակ
1	Օտարում	8702	25.0%	10879	-8.0%	11828
1ա	Առուվաճառք	6626	23.4%	8174	-10.1%	9096
1բ	Նվիրատվություն	2028	17.1%	2375	-11.5%	2684
1գ	Փոխանակում	48	-52.1%	23	-52.1%	48
1դ	Օտարման այլ տեսակ	-	-	307	-	-
2	Վարձակալություն	2116	8.0%	2285	18.2%	1933
3	Գրավադրում	6302	5.8%	6666	-16.1%	7944
4	Ժառանգություն	2473	11.4%	2756	-12.4%	3146
5	Օրինականացում	150	55.3%	233	6.9%	218
6	Առաջնային գրանցում	2318	2.5%	2375	-33.4%	3568
7	Պետգր. /վերագրանցում/	1924	-9.4%	1744	-20.5%	2193
	Ընդամենը գործարք	23985	12.3%	26938	-12.6%	30830

1.2.3 Երևան քաղաքում 2018 թվականի առաջին կիսամյակում ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 57.4 % գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 2.5 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 1.2-3-ում ներկայացված է 2018 թվականի առաջին կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 1.2-3

Երևան քաղաքում ընդհանուր գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակի



Աղյուսակ 1.2-3-ում ներկայացված է 2018 թվականի առաջին կիսամյակում Երևան քաղաքում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի առաջին և երկրորդ կիսամյակների նկատմամբ.

Աղյուսակ 1.2-3


Հ/Հ	Գույքի տեսակ	Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները				
		2017 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2017 թվականի երկրորդ կիսամյակ
1	բնակարան	13257	16.6%	15463	-15.7%	18343
2	Անհատական բնակելի տուն	3261	14.3%	3728	-12.1%	4243
3	արտադրական նշ. շին	1004	-31.8%	685	2.2%	670
4	հասարակական նշ. շին.	3610	11.4%	4022	2.7%	3917
5	ավտոտնակ	1666	7.3%	1788	-21.6%	2280
6	հող	1187	5.5%	1252	-9.1%	1377
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	196	-17.9%	161	-31.2%	234
Ընդամենը		23985	12.3%	26938	-12.6%	30830

1.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված ընդհանուր գործարքների վերլուծություն

1.3.1 Մարզերում 2018 թվականի առաջին կիսամյակում ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 37.1% գրանցվել է օտարման, իսկ առավել ցածրը՝ 1.0 % օրինականացման գործարքների նկատմամբ:

Գծապատկեր 1.3-1-ում ներկայացված է 2018 թվականի առաջին կիսամյակում մարզերում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ տեսակների:

Գծապատկեր 1.3-1



Աղյուսակ 1.3-1-ում ներկայացված է 2018 թվականի առաջին կիսամյակում մարզերում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի առաջին և երկրորդ կիսամյակների նկատմամբ:


Աղյուսակ 1.3-1

Հ/Հ	Գործարքի տեսակ	2017 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2017 թվականի երկրորդ կիսամյակ
1	Օտարում	13004	39.8%	18183	-3.0%	18741
1ա	Առուվաճառք	8887	43.1%	12719	-10.5%	14215
1բ	Նվիրատվություն	4083	7.7%	4396	-1.7%	4473
1գ	Փոխանակում	34	23.5%	42	-20.8%	53
1դ	Օտարման այլ տեսակ	-	-	1026	-	-
2	Վարձակալություն	1890	23.5%	2335	-34.7%	3574
3	Գրավադրում	4445	28.0%	5689	1.0%	5634
4	Ժառանգություն	6233	50.4%	9373	1.5%	9230
5	Օրինականացում	326	44.5%	471	-13.9%	547
6	Առաջնային գրանցում	8122	12.6%	9143	-22.5%	11793
7	Պետգր. /վերագրանցում/	2151	80.3%	3878	36.3%	2846
	Ընդամենը գործարք	36171	35.7%	49072	-6.3%	52365

1.3.2 Մարզերում 2018 թվականի առաջին կիսամյակում ընդհանուր գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 51.0% գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.3% ավտոտնակների նկատմամբ:

Գծապատկեր 1.3-4-ում ներկայացված է 2018 թվականի առաջին կիսամյակում մարզերում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակների.

Գծապատկեր 1.3-4



Աղյուսակ 1.3-4-ում ներկայացված է 2018 թվականի առաջին կիսամյակում մարզերում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի առաջին և երկրորդ կիսամյակների նկատմամբ.

Աղյուսակ 1.3-4

Հ/Հ	Գույքի տեսակ	Մարզերում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակները				
		2017 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2017 թվականի երկրորդ կիսամյակ
1	բնակարան	5613	25.1%	7024	-9.6%	7768
2	անհատական բնակելի տուն	9236	30.4%	12045	-3.1%	12430
3	արտադրական նշ. շին	2118	-35.7%	1361	-14.2%	1587
4	հասարակական նշ. շին.	2396	24.5%	2982	1.8%	2930
5	ավտոտնակ	483	29.2%	624	-18.0%	761
6	հող	16325	53.4%	25036	-6.9%	26889
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	10055	62.5%	16338	-4.6%	17124
	Ընդամենը	36171	35.7%	49072	-6.3%	52365

2. ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ


2.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված օտարման գործարքների վերլուծություն

2.1.1 2018 թվականի առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 29062 օտարման գործարք, որը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 38.2 %-ը:

2009-2018 թվականների առաջին կիսամյակի անշարժ գույքի օտարման գործարքների քանակները ներկայացված են Գծապատկեր 2.1-1-ում.

Գծապատկեր 2.1-1

Առաջին կիսամյակում օտարման գործարքները ըստ տարիների




2.1.2 Հանրապետությունում 2018 թվականի առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ գրանցված օտարման գործարքների առավել բարձր տոկոսաչափը գրանցվել է Երևան քաղաքում՝ 37.4 %, իսկ առավել ցածրը՝ Վայոց Ձորի մարզում 1.6 %:

Գծապատկեր 2.1-2-ում և Գծապատկեր 2.1-3-ում ներկայացված են 2018 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում իրականացված օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ Երևանի և մարզերի.


Գծապատկեր 2.1-2

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԲԱԶԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ



Գծապատկեր 2.1-3

Հանրապետությունում օտարման գործարքների քանակական բաշխվածությունը



Աղյուսակ 2.1-1-ում ներկայացված է 2018 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում իրականացված օտարման գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի առաջին և երկրորդ կիսամյակների նկատմամբ:

Աղյուսակ 2.1-1

	2017 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2017 թվականի երկրորդ կիսամյակ
Երևան	8702	25.0%	10879	-8.0%	11828
Արագածոտն	1041	48.4%	1545	-14.9%	1816
Արարատ	1736	45.4%	2525	1.5%	2488
Արմավիր	1565	38.3%	2165	-8.5%	2367
Գեղարքունիք	1309	34.2%	1757	-1.2%	1779
Լոռի	1453	73.9%	2527	26.8%	1993
Կոտայք	2498	50.2%	3751	-11.8%	4255
Շիրակ	1347	0.5%	1354	-12.5%	1547
Սյունիք	789	41.4%	1116	6.9%	1044
Վայոց Ձոր	407	16.2%	473	-10.8%	530
Տավուշ	859	12.9%	970	5.2%	922
Հանրապետություն	21706	33.9%	29062	-4.9%	30569


2018 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում գրանցված օտարման գործարքների քանակը 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 4.9%-ով, 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել՝ 33.9%-ով, Երևան քաղաքում՝ 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 8.0%-ով, 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ աճել 25.0 %-ով, մարզերի քաղաքային բնակավայրերում՝ 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 4.7%-ով, 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ աճել 25.6 %-ով իսկ գյուղական բնակավայրերում՝ 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 1.9%-ով, 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ աճել 50.5%-ով:

2.1.3 Հանրապետությունում 2018 թվականի առաջին կիսամյակում օտարման գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 37.5% գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.3 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 2.1-4-ում և Գծապատկեր 2.1-5-ում ներկայացված են 2018 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ գույքի տեսակների.


Գծապատկեր 2.1-4

Հանրապետությունում օտարման գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակի



Գծապատկեր 2.1-5

Հանրապետությունում օտարման գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակի




Աղյուսակ 2.1-2-ում ներկայացված է հանրապետությունում 2018 թվականի առաջին կիսամյակում անշարժ գույքի օտարման գործարքների քանակական և տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակի:

Աղյուսակ 2.1-2

Հ/Հ	Գույքի տեսակ	Հանրապետություն		Երևան			Մարզերի քաղաքային բնակավայրեր			Գյուղական բնակավայրեր		
		քանակ	%	քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում	քանակ	%	Տեսակարար կշիռը նմանատիպ գործարքներում
1	բնակարան	10314	35.5%	7154	65.8%	69.4%	2950	42.1%	28.6%	210	1.9%	2.0%
2	անհատական բնակելի տուն	4773	16.4%	1171	10.8%	24.5%	1235	17.6%	25.9%	2367	21.2%	49.6%
3	արտադրական նշ. շին.	374	1.3%	112	1.0%	29.9%	86	1.2%	23.0%	176	1.6%	47.1%
4	հասարակական նշ. շին.	1468	5.1%	830	7.6%	56.5%	458	6.5%	31.2%	180	1.6%	12.3%
5	ավտոտնակ	1225	4.2%	919	8.4%	75.0%	270	3.9%	22.0%	36	0.3%	2.9%
6	հող	10908	37.5%	693	6.4%	6.4%	2004	28.6%	18.4%	8211	73.4%	75.3%
6ա	ա/թ գյուղ նշ.հող	6583	22.7%	53	0.5%	0.8%	743	10.6%	11.3%	5787	51.8%	87.9%
	Ընդամենը գործարք	29062	100.0%	10879	100.0%	37.4%	7003	100.0%	24.1%	11180	100.0%	38.5%

Գծապատկեր 2.1-6-ում և Աղյուսակ 2.1-3-ում ներկայացված են 2018 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում իրականացված օտարման գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ գործարքի տեսակների.

Գծապատկեր 2.1-6



Աղյուսակ 2.1-3

Օտարում	Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ	Մարզերը	Ընդամենը
Առուվաճառք	8174	1079	1964	1680	897	1548	2859	931	765	388	608	12719	20893
Նվիրատվություն	2375	449	535	435	634	433	833	387	309	83	298	4396	6771
Փոխանակում	23	6	6	0	4	6	16	0	2	0	2	42	65
Օտարման այլ տեսակ	307	11	20	50	222	540	43	36	40	2	62	1026	1333
Ընդամենը	10879	1545	2525	2165	1757	2527	3751	1354	1116	473	970	18183	29062


3. ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

3.1 Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.1.1 2018 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում գրանցվել է անշարժ գույքի առուվաճառքի 20893 գործարք :

2009-2018 թվականների առաջին կիսամյակի անշարժ գույքի առուվաճառքի գործարքների քանակները ներկայացված են Գծապատկեր 3.1-1-ում.

Գծապատկեր 3.1-1




3.1.2 Հանրապետությունում 2018 թվականի առաջին կիսամյակում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը գրանցվել է Երևան քաղաքում՝ 39.1 %, իսկ առավել ցածրը՝ Վայոց ձորի մարզում 1.9 %:

Գծապատկեր 3.1-2-ում և Գծապատկեր 3.1-3-ում ներկայացված են 2018 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում իրականացված առուվաճառքի գործարքների տոկոսային և քանակական բաշխվածությունները ըստ Երևանի և մարզերի.


Գծապատկեր 3.1-2

Հանրապետությունում առուվաճառքի գործարքների տոկոսային բաշխվածությունը



Գծապատկեր 3.1-3

Հանրապետությունում առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը



Աղյուսակ 3.1-1-ում ներկայացված է 2018 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի առաջին և երկրորդ կիսամյակների նկատմամբ:

	2017 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2017 թվականի երկրորդ կիսամյակ
Երևան	6626	23.4%	8174	-10.1%	9096
Արագածոտն	737	46.4%	1079	-23.3%	1406
Արարատ	1303	50.7%	1964	0.3%	1958
Արմավիր	1219	37.8%	1680	-5.8%	1783
Գեղարքունիք	706	27.1%	897	-30.8%	1297
Լոռի	1051	47.3%	1548	-1.1%	1565
Կոտայք	1880	52.1%	2859	-15.7%	3390
Շիրակ	813	14.5%	931	-13.5%	1076
Սյունիք	475	61.1%	765	10.2%	694
Վայոց Ձոր	261	48.7%	388	-5.4%	410
Տավուշ	442	37.6%	608	-4.4%	636
Հանրապետություն	15513	34.7%	20893	-10.4%	23311


2018 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում գրանցված առուվաճառքի գործարքների քանակը 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 10.4 %-ով, 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ աճել 34.7%-ով, Երևան քաղաքում՝ 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 10.1%-ով, 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ աճել 23.4 %-ով, մարզերի քաղաքային բնակավայրերում՝ 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 8.2 %-ով, 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ աճել 27.9 %-ով, իսկ գյուղական բնակավայրերում՝ 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 12.0%-ով, 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ աճել 55.1 %-ով:

3.1.3 Հանրապետությունում 2018 թվականի առաջին կիսամյակում առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 38.4 % գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.4 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.1-4-ում և Գծապատկեր 3.1-5-ում ներկայացված են 2018 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների տոկոսային և քանակական բաշխվածություններն ըստ գույքի տեսակների.


Գծապատկեր 3.1-4

Հանրապետությունում առուվաճառքի գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ գույքի տեսակի



Գծապատկեր 3.1-5

Հանրապետությունում առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակի



	Բնակարան	Բնակելի տուն	Արտ.նշ.շին.	Հաս.նշ.շին.	Ավտոտնակ	Քող
2017թ. առաջին կիսամյակ	5932	2007	231	990	865	5488
2018թ. առաջին կիսամյակ	7664	2749	292	1103	1056	8029
2017թ. երկրորդ կիսամյակ	8423	3271	305	1177	1235	8900

Աղյուսակ 3.1-2-ում ներկայացված է 2018 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում իրականացված ընդհանուր գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի առաջին և երկրորդ կիսամյակների նկատմամբ :

Աղյուսակ 3.1-2


Հ/Հ	Գույքի տեսակ	Հանրապետությունում առուվաճառքի գործարքների քանակները				
		2017 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2017 թվականի երկրորդ կիսամյակ
1	բնակարան	5932	29.2%	7664	-9.0%	8423
2	անհատական բնակելի տուն	2007	37.0%	2749	-16.0%	3271
3	արտադրական նշ. շին	231	26.4%	292	-4.3%	305
4	հասարակական նշ. շին.	990	11.4%	1103	-6.3%	1177
5	ավտոտնակ	865	22.1%	1056	-14.5%	1235
6	հող	5488	46.3%	8029	-9.8%	8900
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	3194	41.5%	4519	-9.0%	4966
	Ընդամենը	15513	34.7%	20893	-10.4%	23311

3.2 Երևան քաղաքում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.2.1 Երևան քաղաքում 2018 թվականի առաջին կիսամյակում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափն արձանագրվել է Կենտրոն 20.3%, իսկ առավել ցածրը՝ 0.4 % Նուբարաշեն վարչական շրջաններում:

Գծապատկեր 3.2-1-ում ներկայացված է 2018 թվականի առաջին կիսամյակում Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունն ըստ վարչական շրջանների.

Գծապատկեր 3.2-1



Աղյուսակ 3.2-1-ում ներկայացված է 2018 թվականի առաջին կիսամյակում Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի առաջին և երկրորդ կիսամյակների նկատմամբ:


Աղյուսակ 3.2-1

Վարչական շրջան	2017 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2017 թվականի երկրորդ կիսամյակ
Դավթաշեն	305	41.0%	430	-24.2%	567
Էրեբունի	387	23.8%	479	-1.4%	486
Աջափնյակ	599	43.2%	858	13.9%	753
Ավան	488	-11.9%	430	-3.2%	444
Արաբկիր	1053	16.7%	1229	-25.2%	1644
Կենտրոն	1305	29.3%	1688	-10.7%	1890
Մալաթիա-Սեբաստիա	696	15.5%	804	-9.4%	887
Քանաքեռ-Զեյթուն	312	85.3%	578	10.9%	521
Շենգավիթ	645	19.1%	768	-6.8%	824
Նոր-Նորք	745	10.7%	825	-13.4%	953
Նորք-Մարաշ	36	38.9%	50	-39.8%	83
Նուբարաշեն	55	-36.4%	35	-20.5%	44
Երևան	6626	23.4%	8174	-10.1%	9096

3.2.2 Երևան քաղաքում 2018 թվականի առաջին կիսամյակում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 65.4 % գրանցվել է բնակարանների, իսկ առավել ցածրը՝ 1.1 % արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.2-2-ում ներկայացված է 2018 թվականի առաջին կիսամյակում Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակի:

Գծապատկեր 3.2-2



Աղյուսակ 3.2-2-ում ներկայացված է 2018 թվականի առաջին կիսամյակում Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի առաջին և երկրորդ կիսամյակների նկատմամբ:

Աղյուսակ 3.2-2


Հ/Հ	Գույքի տեսակ	Երևան քաղաքում իրականացված առուվաճառքի գործարքների քանակները				
		2017 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2017 թվականի երկրորդ կիսամյակ
1	բնակարան	4194	27.5%	5346	-9.9%	5936
2	անհատակ անբնակելի տուն	608	22.7%	746	-21.4%	949
3	արտադրական նշ. շին	89	-1.1%	88	14.3%	77
4	հասարակական նշ. շին.	585	8.5%	635	-9.3%	700
5	ավտոտնակ	687	14.8%	789	-13.6%	913
6	հող	463	23.1%	570	9.4%	521
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	34	17.6%	40	-20.0%	50
Ընդամենը		6626	23.4%	8174	-10.1%	9096

3.3 Մարզերում անշարժ գույքի շուկայում իրականացված առուվաճառքի գործարքների վերլուծություն

Մարզերում 2018 թվականի առաջին կիսամյակում առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը՝ 58.6 % գրանցվել է հողերի, իսկ առավել ցածրը՝ 1.6% արտադրական նշանակության շինությունների նկատմամբ:

Գծապատկեր 3.3-1-ում ներկայացված է 2018 թվականի առաջին կիսամյակում մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ գույքի տեսակի:

Գծապատկեր 3.3-1



Աղյուսակ 3.3-1-ում ներկայացված է 2018 թվականի առաջին կիսամյակում մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի առաջին և երկրորդ կիսամյակների նկատմամբ:

Աղյուսակ 3.3-1


Հ/Հ	Գույքի տեսակ	Մարզերում իրականացված առուվաճառքի գործարքների քանակները				
		2017 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2017 թվականի երկրորդ կիսամյակ
1	բնակարան	1738	33.4%	2318	-6.8%	2487
2	անհատական բնակելի տուն	1399	43.2%	2003	-13.7%	2322
3	արտադրական նշ. շին	142	43.7%	204	-10.5%	228
4	հասարակական նշ. շին.	405	15.6%	468	-1.9%	477
5	ավտոտնակ	178	50.0%	267	-17.1%	322
6	հող	5025	48.4%	7459	-11.0%	8379
6ա	ա/թ գյուղատնտ. նշ. հող	3160	41.7%	4479	-8.9%	4916
Ընդամենը		8887	43.1%	12719	-10.5%	14215

3.4 Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.4.1 Հանրապետությունում 2018 թվականի առաջին կիսամյակում իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի 7664 գործարք : 2018 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում գրանցված բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 9.0 %-ով, 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ աճել 29.2 %-ով

Գծապատկեր 3.4-1-ում ներկայացված է 2018 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում իրականացված բնակարանների առուվաճառքի գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ Երևանի և մարզերի:

Գծապատկեր 3.4-1



Աղյուսակ 3.4-1-ում ներկայացված է 2018 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում իրականացված բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի առաջին և երկրորդ կիսամյակների նկատմամբ.

Աղյուսակ 3.4-1

	2017 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2017 թվականի երկրորդ կիսամյակ
Երևան	4194	27.5%	5346	-9.9%	5936
Արագածոտն	42	40.5%	59	20.4%	49
Արարատ	149	21.5%	181	-18.1%	221
Արմավիր	201	21.4%	244	-9.6%	270
Գեղարքունիք	114	11.4%	127	-10.6%	142
Լոռի	329	22.5%	403	-4.7%	423
Կոտայք	424	46.5%	621	-4.0%	647
Շիրակ	259	31.3%	340	-10.1%	378
Սյունիք	116	83.6%	213	13.3%	188
Վայոց Ձոր	34	52.9%	52	-8.8%	57
Տավուշ	70	11.4%	78	-30.4%	112
Հանրապետություն	5932	29.2%	7664	-9.0%	8423


3.4.2 Երևան քաղաքում 2018 թվականի առաջին կիսամյակում իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի 5346 գործարք, 2018 թվականի առաջին կիսամյակում Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 9.9%-ով, իսկ 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ աճել 27.5 %-ով:

Երևան քաղաքում 2018 թվականի առաջին կիսամյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակի առավել բարձր տոկոսաչափն արձանագրվել է Կենտրոն 19.6 %, իսկ առավել ցածրը՝ 0.2% Նորք-Մարաշ վարչական շրջաններում:

Գծապատկեր 3.4-2-ում ներկայացված է 2018 թվականի առաջին կիսամյակում Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների.

Գծապատկեր 3.4-2

Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների



■ 2017թ.առաջին կիսամյակ	168	157	394	357	726	759	448	196	397	573	5	14
■ 2018թ.առաջին կիսամյակ	284	241	583	253	894	1050	517	380	491	624	9	20
■ 2017թ.երկրորդ կիսամյակ	404	219	497	309	1144	1158	545	360	491	760	34	15

Աղյուսակ 3.4-2-ում ներկայացված են 2018 թվականի առաջին կիսամյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների պայմանագրային գների և վաճառահանված բնակարանների առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով՝ ըստ վարչական շրջանների և տարածագնահատման գոտիների.

Աղյուսակ 3.4-2

Վարչական շրջան	2017 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2017 թվականի երկրորդ կիսամյակ
Կենտրոն միջին	435500	15.8%	504200	10.6%	456000
Կենտրոն 1 գոտի		N/A	629000	N/A	
Կենտրոն 2 գոտի		N/A	479100	N/A	
Կենտրոն 3 գոտի		N/A	434000	N/A	
Կենտրոն 4 գոտի		N/A	372500	N/A	
Կենտրոն 5 գոտի		N/A	338400	N/A	
Արաբկիր միջին	347200	4.0%	361150	4.9%	344400
Արաբկիր 3 գոտի		N/A	425150	N/A	
Արաբկիր 4 գոտի		N/A	374750	N/A	
Արաբկիր 5 գոտի		N/A	333450	N/A	
Արաբկիր 6 գոտի		N/A	223750	N/A	
Քանաքեռ-Զեյթուն միջին	273900	-0.4%	272850	2.1%	267350
Քանաքեռ-Զեյթուն 4 գոտի		N/A	328450	N/A	
Քանաքեռ-Զեյթուն 5 գոտի		N/A	315000	N/A	
Քանաքեռ-Զեյթուն 6 գոտի		N/A	286950	N/A	
Քանաքեռ-Զեյթուն 7 գոտի		N/A	216750	N/A	
Նոր-Նորք միջին	243000	-1.3%	239800	3.8%	231100

Նոր-Նորք 6 գոտի		N/A	259800	N/A	
Նոր-Նորք 7 գոտի		N/A	220050	N/A	
Էրեբունի միջին	243100	1.8%	247450	4.4%	237000
Էրեբունի 5 գոտի		N/A	289200	N/A	
Էրեբունի 6 գոտի		N/A	260000	N/A	
Էրեբունի 7 գոտի		N/A	237450	N/A	
Էրեբունի 8 գոտի		N/A	198550	N/A	
Շենգավիթ միջին	247200	1.7%	251300	3.8%	242100
Շենգավիթ 5 գոտի		N/A	273850	N/A	
Շենգավիթ 6 գոտի		N/A	263500	N/A	
Շենգավիթ 7 գոտի		N/A	236150	N/A	
Շենգավիթ 8 գոտի		N/A	192800	N/A	
Դավթաշեն միջին	261600	6.7%	279100	9.8%	254100
Դավթաշեն 7 գոտի		N/A	279100	N/A	
Աջափնյակ միջին	240200	2.1%	245300	7.5%	228250
Աջափնյակ 4 գոտի		N/A	267700	N/A	
Աջափնյակ 6 գոտի		N/A	273800	N/A	
Աջափնյակ 7 գոտի		N/A	223250	N/A	
Աջափնյակ 8 գոտի		N/A	230700	N/A	
Մալաթիա-Սեբաստիա միջին	235500	0.8%	237500	2.3%	232150
Մալաթիա-Սեբաստիա 6 գոտի		N/A	287500	N/A	
Մալաթիա-Սեբաստիա 7 գոտի		N/A	234300	N/A	
Մալաթիա-Սեբաստիա 8 գոտի		N/A	196800	N/A	
Ավան միջին	254850	-0.1%	254550	2.6%	248200
Ավան 6 գոտի		N/A	207200	N/A	
Ավան 7 գոտի		N/A	257850	N/A	
Նուբարաշեն միջին	156850	3.1%	161650	2.7%	157350
Նուբարաշեն 9		N/A	161650	N/A	

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2018 թվականի առաջին կիսամյակում Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ աճել են 5.4 %-ով, իսկ 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ 3.9 %-ով:

Ծանոթություն

Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գները տրված են ըստ ՀՀ կառավարության 17.04.2003թ. N470-Ն որոշմամբ հաստատված տարաձազնահատման գոտիների:

*Մալաթիա-Սեբաստիա համայնքի 6-րդ գոտում ընդգրկված է Ծիծեռնակաբերդի խճուղին

*Ավան համայնքի 7-րդ գոտում ընդգրկված է Ծարավ Աղբյուրի փողոցը

*Աջափնյակ համայնքի 8-րդ գոտում ընդգրկված է Վահագնի թաղամասը

Վերոնշյալ փողոցներն ու թաղամասերն էական ազդեցություն են թողնում տվյալ գոտում ձևավորվող բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական գների վրա:

*N/A-նշված գոտում միջին գնի հաշվարկման համար 1 տարվա ընթացքում բավարար քանակով գործարքներ չեն գրանցվել


3.4.3 2018 թվականի առաջին կիսամյակում մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 2318 բնակարան, ընդ որում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների 5.7%-ը գրանցվել է գյուղական բնակավայրերում:

2018 թվականի առաջին կիսամյակում մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 6.8 %-ով, իսկ 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ 25.0 %-ով:

Գծապատկեր 3.4-3-ում ներկայացված է 2018 թվականի առաջին կիսամյակում մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը.

Գծապատկեր 3.4-3

**Մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի
բնակարանների առուվաճառքի գործարքների
քանակական բաշխվածությունը**



Աղյուսակ 3.4-3-ում ներկայացված են 2018 թվականի առաջին կիսամյակում մարզերի քաղաքներում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների պայմանագրային գների, վաճառահանված բնակարանների առաջարկվող գների և մասնագիտացված կազմակերպության կողմից անշարժ գույքի գների վերաբերյալ տրամադրված տվյալների վերլուծության արդյունքում ձևավորված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջինացված գները՝ 1մ² մակերեսի հաշվարկով.

Աղյուսակ 3.4-3

Մարզը	Քաղաքը	2018 թվականի առաջին կիսամյակ
Արագածոտն	Աշտարակ	110850
	Ապարան	83300
	Թալին	68550
Արարատ	Արտաշատ	99050
	Մասիս	99600
	Վեդի	92900
	Արարատ	83300
Արմավիր	Վաղարշապատ	121300
	Արմավիր	90600
	Մեծամոր	66600
Գեղարքունիք	Սևան	83350
	Գավառ	54050
	Մարտունի	118400
	Վարդենիս	55800
	Ճամբարակ	39000

Լոռի	Վանաձոր	78100
	Ստեփանավան	67500
	Սպիտակ	90800
	Ալավերդի	48800
	Տաշիր	56800
	Թումանյան	23050
	Շամլուղ	28200
	Ախթալա	33800
Կոտայք	Աբովյան	156100
	Նոր Հաճն	125000
	Բյուրեղավան	96300
	Եղվարդ	116250
	Հրազդան	57200
	Ծաղկաձոր	280400
	Չարենցավան	70225
Շիրակ	Գյումրի	90350
	Արթիկ	66950
	Մարալիկ	52025
Սյունիք	Գորիս	131850
	Կապան	101950
	Սիսիան	81400
	Մեղրի	105350
	Քաջարան	100100
	Դաստակերտ	22200
Վայոց ձոր	Վայք	87400
	Եղեգնաձոր	119600
	Զերմուկ	107800
Տավուշ	Դիլիջան	105850
	Իջևան	114300
	Բերդ	96500
	Նոյեմբերյան	54600
	Այրում	57700


3.5 Հողերի առուվաճառքի գործարքների վերլուծություն

3.5.1 Հանրապետությունում 2018 թվականի առաջին կիսամյակում իրականացվել է հողերի առուվաճառքի 8029 գործարք : 2018 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում գրանցված հողերի առուվաճառքի գործարքների քանակը 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 9.8%-ով, 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ աճել 46.3%-ով :

Գծապատկեր 3.5-1-ում ներկայացված է 2018 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում իրականացված հողերի առուվաճառքի գործարքների տոկոսային բաշխվածությունը ըստ Երևանի և մարզերի.

Գծապատկեր 3.5-1

Հանրապետությունում հողերի առուվաճառքի գործարքների տոկոսային բաշխվածությունը



Աղյուսակ 3.5-1-ում ներկայացված է 2018 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում իրականացված հողերի առուվաճառքի գործարքների քանակական համեմատությունը 2017 թվականի առաջին և երկրորդ կիսամյակների նկատմամբ:

Աղյուսակ 3.5-1


	2017 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2018 թվականի առաջին կիսամյակ	փոփոխումը	2017 թվականի երկրորդ կիսամյակ
Երևան	463	23.1%	570	9.4%	521
Արագածոտն	554	51.6%	840	-27.3%	1155
Արարատ	860	51.6%	1304	3.7%	1257
Արմավիր	755	41.1%	1065	-2.6%	1093
Գեղարքունիք	400	31.8%	527	-43.9%	940
Լոռի	484	54.8%	749	40.8%	532
Կոտայք	1060	55.8%	1652	-21.5%	2105
Շիրակ	316	5.7%	334	-15.2%	394
Սյունիք	192	82.8%	351	30.0%	270
Վայոց Ձոր	174	54.0%	268	-5.0%	282
Տավուշ	230	60.4%	369	5.1%	351
Հանրապետություն	5488	46.3%	8029	-9.8%	8900

3.5.2 Երևան քաղաքում 2018 թվականի առաջին կիսամյակում իրականացվել է հողերի առուվաճառքի 570 գործարք: 2018 թվականի առաջին կիսամյակում Երևան քաղաքում հողերի առուվաճառքի գործարքների քանակը 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ աճել է 9.4 %-ով, իսկ 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ 23.1 %-ով:

Գծապատկեր 3.5-2-ում ներկայացված է 2018 թվականի առաջին կիսամյակում Երևան քաղաքում հողի առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների:

Գծապատկեր 3.5-2

Երևան քաղաքում հողերի առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը ըստ վարչական շրջանների



2017թ. առաջին կիսամյակ	47	29	75	31	24	64	71	18	42	30	5	27
2018թ. առաջին կիսամյակ	59	21	78	51	28	60	95	33	49	71	17	8
2017թ. երկրորդ կիսամյակ	47	30	63	33	51	54	95	23	48	48	9	20

2018 թվականի առաջին կիսամյակում Երևան քաղաքում հողերի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափն արձանագրվել է Մալաթիա-Սեբաստիա՝ 16.7 %, իսկ առավել ցածրը՝ 1.4%՝ Նուբարաշեն վարչական շրջաններում:

2018 թվականի առաջին կիսամյակում Երևան քաղաքում իրականացվել է հողերի առուվաճառքի 570 գործարք՝ 43.40 հա ընդհանուր մակերեսով, որոնք ըստ նպատակային նշանակության բաշխվել են հետևյալ կերպ.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 40 միավոր (3.45 հա),
- բնակելի կառուցապատման (տնամերձ) հող՝ 289 միավոր (24.24 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 223 միավոր (13.63 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 16 միավոր (1.89 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 2 միավոր (0.19 հա) մակերեսով:

Երևան քաղաքում վաճառված հողերի քանակի 32.8 %-ը կամ 187 միավոր՝ 14.62 հա ընդհանուր մակերեսով, հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, իսկ 67.2 %-ը կամ 383 միավոր (28.78 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող:

Աղյուսակ 3.7-2-ում ներկայացված է 2018 թվականի առաջին կիսամյակում Երևան քաղաքում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն՝ ըստ վարչական շրջանների և հողերի նպատակային նշանակության, բացառությամբ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

Աղյուսակ 3.7-2

Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող			Մասնավոր սեփականություն հանդիսացող		
Գյուղ. նշա-	Արդյունա-	Բնակավայրերի հողեր	Գյուղ. նշա-	Արդյունա-	Բնակավայրերի հողեր

	Նակության հոդեր		բերական օբյեկտների հոդեր		բնակելի կառուցապատ. (տնամերձ) հոդեր		Հասարակական կառուցապատ. հոդեր		Նակության հոդեր		բերական օբյեկտների հոդեր		բնակելի կառուցապատ. (տնամերձ) հոդեր		Հասարակական կառուցապատ. հոդեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Դավթաշեն	0	0.00	0	0.00	5	0.29	4	0.09	0	0.00	0	0.00	37	2.43	13	0.50
Էրեբունի	0	0.00	0	0.00	4	0.14	8	0.13	0	0.00	0	0.00	4	0.31	5	0.24
Աջափնյակ	0	0.00	0	0.00	7	0.28	14	0.35	0	0.00	0	0.00	22	1.74	35	2.67
Ավան	0	0.00	2	0.63	14	1.36	8	0.29	0	0.00	0	0.00	16	1.05	11	0.61
Արաբկիր	0	0.00	0	0.00	7	0.37	3	0.06	0	0.00	0	0.00	13	0.97	5	1.07
Կենտրոն	0	0.00	1	0.02	14	0.14	10	0.19	0	0.00	1	0.10	23	2.39	11	0.52
Մալաթիա-Սեբաստիա	0	0.00	1	0.05	5	6.70	11	0.74	39	3.30	0	0.00	22	1.00	17	1.48
Քանաքեռ-Զեյթուն	0	0.00	0	0.00	6	0.41	5	0.05	0	0.00	0	0.00	9	0.62	13	2.81
Շենգավիթ	0	0.00	4	0.75	5	0.11	8	0.05	1	0.15	4	0.20	24	0.99	1	0.05
Նոր-Նորք	0	0.00	1	0.02	8	0.13	24	0.56	0	0.00	2	0.12	23	1.34	13	0.47
Նորք-Մարաշ	0	0.00	0	0.00	7	0.71	0	0.00	0	0.00	0	0.00	7	0.48	3	0.70
Նուբարաշեն	0	0.00	0	0.00	0	0.00	1	0.003	0	0.00	0	0.00	7	0.28	0	0.00
Ընդամենը	0	0.00	9	1.47	82	10.64	96	2.51	40	3.45	7	0.42	207	13.60	127	11.12

Աղյուսակ 3.7-3-ում ներկայացված է 2018 թվականի առաջին կիսամյակում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի աճուրդային և ուղղակի վաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ վարչական շրջանների և հողերի նպատակային նշանակության.

Աղյուսակ 3.7-3


Վարչական շրջաններ	Ուղղակի վաճառք								Աճուրդային վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր								բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Դավթաշեն	2	0.013	0	0.00	1	0.003	1	0.01	7	0.37	0	0.00	0	0.00	4	0.29	3	0.08
Էրեբունի	4	0.10	0	0.00	2	0.09	2	0.01	8	0.17	0	0.00	0	0.00	2	0.05	6	0.12
Աջափնյակ	7	0.20	0	0.00	5	0.15	2	0.05	14	0.43	0	0.00	0	0.00	2	0.13	12	0.30
Ավան	8	0.26	1	0.13	5	0.08	2	0.05	16	2.02	0	0.00	1	0.50	9	1.28	6	0.24
Արաբկիր	8	0.39	0	0.00	5	0.33	3	0.06	2	0.04	0	0.00	0	0.00	2	0.04	0	0.00
Կենտրոն	19	0.24	1	0.02	12	0.06	6	0.16	6	0.13	0	0.00	0	0.00	2	0.09	4	0.04
Մալաթիա-Սեբաստիա	8	6.72	0	0.00	4	6.69	4	0.03	9	0.77	0	0.00	1	0.05	1	0.01	7	0.71
Քանաքեռ-Զեյթուն	8	0.16	0	0.00	4	0.12	4	0.04	3	0.29	0	0.00	0	0.00	2	0.28	1	0.01
Շենգավիթ	8	0.18	2	0.16	2	0.01	4	0.01	9	0.72	0	0.00	2	0.59	3	0.10	4	0.03
Նոր-Նորք	14	0.26	1	0.02	3	0.04	10	0.20	19	0.47	0	0.00	0	0.00	5	0.10	14	0.37
Նորք-Մարաշ	3	0.06	0	0.00	3	0.06	0	0.00	4	0.65	0	0.00	0	0.00	4	0.65	0	0.00
Նուբարաշեն	1	0.003	0	0.00	0	0.00	1	0.003	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Ընդամենը	90	8.59	5	0.33	46	7.63	39	0.62	97	6.06	0	0	4	1.14	36	3.02	57	1.90

3.5.3 Մարզերում 2018 թվականի առաջին կիսամյակում իրականացվել է հողերի առուվաճառքի 7459 գործարք, ընդ որում նշված առուվաճառքի գործարքների 80.5%-ը գրանցվել է գյուղական բնակավայրերում:

2018 թվականի առաջին կիսամյակում մարզերում հողերի առուվաճառքի գործարքների քանակը 2017 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 11.0%-ով, իսկ 2017 թվականի առաջին կիսամյակի համեմատ՝ աճել 48.4 %-ով:

Գծապատկեր 3.5-3-ում ներկայացված է 2018 թվականի առաջին կիսամյակում մարզերում իրականացված հողերի առուվաճառքի գործարքների քանակական բաշխվածությունը.

Գծապատկեր 3.5-3



Մարզերում 2018 թվականի առաջին կիսամյակում հողերի առուվաճառքի գործարքների առավել բարձր տոկոսաչափը գրանցվել է Կոտայքի՝ 22.1 %, իսկ առավել ցածրը՝ 3.6% Վայոց Ձորի մարզերում:

2018 թվականի առաջին կիսամյակում մարզերում իրականացվել է հողերի առուվաճառքի 7459 գործարք՝ 4787.76 հա ընդհանուր մակերեսով, որոնք ըստ նպատակային նշանակության բաշխվել են հետևյալ կերպ.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 4479 միավոր (4468.35 հա),
- բնակելի կառուցապատման (տնամերձ) հող՝ 2041 միավոր (176.66 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 751 միավոր (47.75 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 108 միավոր (28.46 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 14 միավոր (7.55 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 61 միավոր (13.51 հա),

- ջրային հող՝ 5 միավոր (45.48 հա) մակերեսով:

Հողերի առավաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 1614.71 հա, որից 1572.04 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

Մարզերում վաճառված հողերի քանակի 30.2 %-ը կամ 2256 միավորը (1331.90 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, իսկ 69.8 %-ը կամ 5203 միավորը (3455.86 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող: 2018 թվականի առաջին կիսամյակում մարզերում գրանցվել է վարձակալության իրավունքի վաճառքի 73 գործարք (25.15 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի:

